

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

30 դեկտեմբերի 2016թ.
ք.Երևան

N 156-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 83-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ըստ ընտրական տարածքների ընտրողների թվի վերաբերյալ տրամադրված տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրություններին յուրաքանչյուր ընտրական տարածքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

Տ.Մուկուչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՇԻՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ

Ընտրական տարածք	Ընտրական տարածքի տարածքային ընդգրկումը	Ընտրական տարածքում ընտրողների թիվը՝ ըստ ընտրողների ռեգիստրի	Ընտրական տարածքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվ
Թիվ 1 ընտրական տարածք	Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ	198.537	13
Թիվ 2 ընտրական տարածք	Երևան քաղաքի Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջաններ	210.687	14
Թիվ 3 ընտրական տարածք	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջաններ	222.434	14
Թիվ 4 ընտրական տարածք	Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջաններ	206.883	13
Թիվ 5 ընտրական տարածք	Արարատի մարզ	220.309	14
Թիվ 6 ընտրական տարածք	Արմավիրի մարզ	232.232	15
Թիվ 7 ընտրական տարածք	Արագածոտնի մարզ	117.455	7
Թիվ 8 ընտրական տարածք	Գեղարքունիքի մարզ	187.263	12
Թիվ 9 ընտրական տարածք	Լոռու մարզ	238.975	15
Թիվ 10 ընտրական տարածք	Կոտայքի մարզ	237.419	15

Թիվ 11 ընտրական տարածք	Շիրակի մարզ	231.982	15
Թիվ 12 ընտրական տարածք	Սյունիքի և Վայոց ձորի մարզեր	152.805	10
Թիվ 13 ընտրական տարածք	Տավուշի մարզ	107.353	7